

ԱՎԱԴԵՄԻՈՍ ԲՐՈՍԵ

(Հայագիտական գործունեությունը)

Մարի-Ֆելիսիտե Բրոսեն (1802—1880) հայտնի է որպես վրացագետ և հայագետ։ Նրա ընդուն գրչին են պատկանում պատմագիտական, աշխարհագիտական, հնագիտական և բանասիրական հարյուրավոր ուսումնասիրություններ, որոնցից շատերը բազմահատոր են։ Նա ժամանակակից էր այնպիսի արևելագետների, ինչպիսին են Սասին, Ռեմյուզան, արևելագետներ և հայագետներ Ժ. Սեն-Մարտենը, Կատրմերը, Դյուվորիեն, Լանգլուան, որոնք Ֆրանսիայում նոր թափ հաղորդեցին արևելագիտությանը և հայագիտությանը։ Սակայն չնայած արևելագիտական համակողմանի պատրաստությանը Բրոսեն իր արժանի տեղը չգտավ Ֆրանսիայում։ Պետերբուրգի Գիտությունների ակադեմիայի Դրավերով 1837 թ. նա ընտանիքով տեղափոխվեց Պետերբուրգ։ Այստեղ նա հասավ գիտական փառքի գագաթնակետին. ակադեմիայի թղթակից անդամից դարձավ արտակարգ և ապա իսկական անդամ։ Եղավ նաև մի շարք օտար ակադեմիաների և գիտական ընկերությունների թղթակից կամ իսկական անդամ, այդ թվում և Լազարյան ճեմարանի խորհրդի անգամ՝ 1843 թ. մայիսից, Ս. Ղազարի հայկական կաճառի անգամ՝ 1845 թ. մարտից։ Իր աշխատությունների համար ստացավ մի շարք տիտղոսներ, մեդալներ, մատանիներ և այլ ոսկեղեն ու զոհարեղեն պարգևներ, որոնց մի մասը ժամանակին հանձնվեց էրմիտաժի թանգարանին։ Վարեց հասարակական անվճար մի շարք պաշտոններ, բայց որում 1839 թ. օգոստոսի 14-ից երկար տարիներ եղել է վրացերեն և հայերեն աշխատությունների գրաքննիչ։ 27 տարի եղավ էրմիտաժի թանգարանի տնօրինության կազմում։

Փարիզում, հենց Մարի Բրոսեի ծննդյան տարում, 24 տարեկան հասակում մահացավ նրա փայլը, կնոջը թողնելով երեք երեխա, որոնցից կրտսերն էր Մարին։ Նրր նրանք բավականաչափ մեծացել էին, մայրը ուղում էր. որ նրանք նվիրվեին եկեղեցական կարգերին, ինքն էլ քաշվեր մենաստան։ Այդպես էլ եղավ. ավագ որդին իրոք դարձավ քահանա, մայրը՝ միանձնուհի, Մարին նորրենծայարաններում մնաց մինչև 13 տարեկան հասակը։ Այստեղ նա սովորեց իր մայրենի լեզուն, լատիներեն, հունարեն, երբայեցերեն և ասորերեն, որպեսզի նվիրվի աստվա-

ծարանական ուսումնասիրություններին։ Սակայն 1818 թ. իր մեջ չգտալով կրոնավորի կոչում՝ նա դուրս եկավ ուսումնարանից և Փարիզում նվիրվեց արևելագիտության։ Ուսումնասիրեց չինարեն, մանջուրերեն, տիրեթերեն։ 1823 թ. հունվարին մորը կասարած մի այցելության աղողեցության տակ Բրոսեն կրկին մտավ վանք։ Սակայն նույն տարվա աշնանը նա վերջնականապես հրաժարվեց եկեղեցական կյանքից և ընտրեց չինագիտությունը, հրատարակեց հոդվածներ։ «Ասիական գիտական ընկերության» անդամ դարձավ 1825 թ.։ Մի քանի չինագետների հետ ունեցած անձնական վեճի պատճառով նա թողեց չինագիտությունը և նվիրվեց վրացագիտությանն ու հայագիտությանը, որոնք այնուհետև դարձան նրա գիտական երկարատև գործունեության առարկան։ Արևելագիտության այս երկու ճյուղերի ընտրության գործում նրա վրա մեծապես ազդեց և այդ ուղղությամբ սերներչեց Ժ. Սեն-Մարտենը, Բրոսեն, որ նրա կենսագիրն է, իրեն համարում է նրա աշակերտը։

Հայերեն և վրացերեն լեզուների ուսումնասիրությունը Բրոսեն սկսել է 1826 թ.։ Ռուսերեն գիտելը 1823 թվականից։ Նրա սկզբնական հոդվածները վերաբերում են վրաց լեզվի, գրականության և պատմության հարցերին, լույս են տեսել «Ժուռնալ ադիատիկ» հանդեսում։ Հայոց լեզուն և հայ պատմագիրները նրան շատ օգտակար եղան վրացագիտական ուսումնասիրությունների համար. որոնց վերաբերող կարևոր տեղեկություններ նա քաղում էր հայկական աղբյուրներից։ Ըմբռնելով վերջիններիս պատմագիտական հաղվագյուտ արժեքը՝ նա մեծ եռանդով մշակեց հայագիտությունը. Ֆրանսիայում հրատարակեց հայագիտական մի քանի հոդվածներ հայ իրավագիտության մասին, հատվածներ Անանիա Շիրակացուց, նկարագրեց իր ժամանակի հայագիտության վիճակը. վերածանեց ու մշակեց արևելագետ Ֆրեդերիկ Դյուրուայի Վրաստանից և Հայաստանից բերած վիճական արձանագրությունները։

1830 թ. ապրիլին Բրոսեն դիմեց Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրին, որպեսզի չորս տարով գիտական գործուղման մեկնի Պետերբուրգ, Մոսկվա, Վրաստան և Հայաստան։ Ակա-

դեմիան հաստատեց նրա դիմումը, սակայն վրա հասավ 1830 թ. հուլիսի ֆրանսիական հեղափոխությունը: Ակադեմիան նույն դիմումը հաստատեց նաև 1834 թ., սակայն այս անգամ արտաքին քաղաքականության հարցերը խանգարեցին Բրոսեի ցանկության իրականացմանը:

1831 թ. Բրոսեն խնդրեց, որ վրաց լեզվի և գրականության դասընթացների ամբիոն բացվի Արևելյան կենդանի լեզուների կամ Կոլեժ դը Ֆրանս դպրոցներից մեկում: Այս խնդրանքը մերժվեց: Դիմեց, որպեսզի տպարանում ընդունվի որպես սրբագրիչ. այս էլ ղլացան: 1836 թ. միայն գրաշարի համեստ պաշտոնից նա բարձրացավ սրբագրիչի աստիճանին: Նա այն ժամանակ իր երկրորդ կնոջից (առաջինը մահացել էր) ուներ երեք երեխա: Այս տարիները տնտեսապես և հոգեպես շատ ծանր եղան Բրոսեի համար, սակայն չխափանեցին նրա գիտական գործունեությունը: Այդ շրջանում նա հրատարակեց վրացերենի վերաբերյալ ուսումնասիրություններ: 1831 թ. նոր կտակարանի հունարեն բնագիրը հրատարակության պատրաստելիս աղճատված որոշ հատվածներ վերականգնեց՝ հենվելով հայերեն և վրացերեն բնագրերի վրա: Իսկ Լըբոյի Histoire du Bas-Empire (Կայսրության վերջին շրջանի պատմություն) բաղմահատոր աշխատության ժԳ—ԻԱ հատորները խմբագրելիս նա աշխատությունը լրացրեց հայ պատմագիրներից բաղված քաղամթիվ ծանոթագրություններով և ամբողջական հատվածներով:

Իր բարեկամների միջոցով Բրոսեն միշտ հարաբերության մեջ էր Պետերբուրգի Գիտությունների ակադեմիայի հետ և տեղյակ էր այնտեղ կատարվող արևելագիտական աշխատանքին: Այստեղ գնահատվում էին հատկապես նրա վրացագիտական և հայագիտական ուսումնասիրությունները:

1835 թ., երբ Պետերբուրգի արտաքին գործերի մինիստրության կից Արևելյան լեզուների ինստիտուտում արարեբենի և թուրքերենի դասախոս Մ. Շարմուան (M. Charmoy), որը միաժամանակ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ էր և Բրոսեի մտերիմ բարեկամը, ընտանեկան և առողջական պատճառներով հրաժարվեց իր պաշտոնից, լուսավորության մինիստր և ակադեմիայի նախագահ Ս. Ուվարովը Բրոսեին հրավիրեց զբաղեցնելու թափուր մնացած կաճառական տեղը, որը վերապահվում էր հենց նրա մասնագիտությանը՝ վրացահայագիտությանը: Պաշտոնական անհրաժեշտ ձևավանդություններից հետո Բրոսեն 1837 թ. հունիսի 18-ին ընտանիքով հաստատվեց Պետերբուրգում:

Կանգ առնենք նրա հայագիտական աշխատանքի մի քանի կողմերի վրա:

Նախքան նրա ժամանելը, Պետերբուրգի Գիտությունների ակադեմիան մեծ աշխատանք չէր կատարել հայագիտության գծով: Բրոսեն տեղեկացավ կատարված աշխատանքներին, էջմիածնի մատենադարանի ձեռագրական գանձերին: Նրա խնդրանքով Ակադեմիան ընդորինակել տվեց հայերեն ձեռագրեր: Ակադեմիայի 1837 թ. հունիսի 28-ի նիստում նա խնդրեց, որ ձեռք բերվեն հայերեն տպագրական տառեր, որոնք ստացվեցին 1838 թ.:

1838 թ. հուլիսին Մոսկվա կատարած գիտական գործուղման ժամանակ նա վրացերեն տապանագրերի հետ միասին արտագրեց նաև հայերեն տապանագրեր, որ հրատարակեց հետագայում:

Դեռևս 1845 թ. Բրոսեն գրում էր, որ մարդկության պատմության համար շատ օգտակար է Անիի ավերակների, հուշարձանների և վիմագրությունների ուսումնասիրությունը: Իր կամքից անկախ պատճառներով նա չկարողացավ տեսնել այս քաղաքի ավերակները, սակայն ոչ մի առիթ բաց չթողեց, որպեսզի տեղեկություններ քաղի նրա մասին և հրատարակի, կամ ուրիշ գիտնականների՝ Անիին վերաբերող ուսումնասիրությունները լույս աշխարհ հանի:

1845 թ. ամռանը Եվրոպայի հարավային մասում կատարած շրջագայության ժամանակ Բրոսեն այցելեց Վիեննայի Մխիթարյաններին. նրանց հետ նամակակցական կապեր պահպանեց իր ամբողջ գիտական գործունեության ընթացքում: Վիեննայից նա մեկնեց Վենետիկ, որտեղ նրան հյուսանակեց Մխիթարյան միաբանությունը: Հետագայում նա թղթակցեց միաբանության անդամների, հատկապես Գաբրիել Այվադովսկու, Սուքիաս Սոմալյանի, 1862 թվականից Ղևոնդ Ալիշանի և ուրիշների հետ: Այս այցելությունների և անձնական ծանոթությունների շնորհիվ Պետերբուրգի Գիտությունների ակադեմիան գիտական և գրքափոխանակման հարատև կապերի մեջ մտաց հայագիտական այդ երկու օջախների հետ:

1867 թ. Բրոսեն գիտական գործուղման մեկնեց Վենետիկ՝ միաբանության հայերեն, մանավանդ Կիրակոս Գանձակեցու, ձեռագրերն ուսումնասիրելու համար: Սակայն այն ժամանակ Իտալիայի հյուսիսում տարածված ժանտախտի պատճառով նա ստիպվեց կանգ առնել Վիեննայում և վերադառնալ Պետերբուրգ:

Հայագիտական հարցերի շուրջ Բրոսեն նամակակցել է Դյուլոբիեի, Լանգլուայի և ուրիշների հետ:

Հայաստանի պատմական հուշարձաններն ուսումնասիրելու նպատակով 1848 թ. հունվարի սկզբին նա Թիֆլիսից եկավ Հայաստան, Այցելեց Երևանի բերդը, սուրբ Սարգիս եկեղեցին և նրան կից հայկական մի փոքրիկ դպրոց: Էջմիածնի վանքում մնացել է մոտ վեց շաբաթ, ուսումնասիրել է հայերեն ձեռագրեր, իր կողմից ծանոթագրություններ ավելացնելով ֆրանսերեն է թարգմանել մատենադարանապետ Հովհ. Շահաթունյանցի կազմած ձեռագրացուցակը, որ լույս տեսավ 1848 թ. 1840 թ. նա արդեն հրատարակել էր Էջմիածնի մի այլ ձեռագրացուցակ: Նա շատ է ցանկացել տեսնել Կեղարդի, խոր վիրապի և Անիի հուշարձանները, սակայն ցրտաշունչ ձմռան պատճառով ամսոսանքով հրաժարվել է այդ մտադրությունից: Նրա այս ճանապարհորդությունը նկարագրող գրքում լույս են տեսել նաև Անիի հայերեն արձանագրություններ, որ նրան է հանձնել արևելագետ Արիստ. վերջինս դրանք քաղել էր 1845 թ. Անի կատարած իր գիտական ուղևորության ժամանակ: Դրանք հրատարակելով, ֆրանսերեն թարգմանելով և ծանոթագրելով, Բրոսսեն հայագիտությանն ընծան էր ժամանակին ճշիւ և նոր նյութեր, որոնք առավել ևս արժեքավոր են, քանի որ դրանք այժմ թերևս գոյություն չունեն, կամ եթե մնում են էլ, անհաս են մեր վիմագրական ժառանգությունն ուսումնասիրողներին: Արձանագրություններին հաջորդում է Անի քաղաքի նկարագրությունը՝ շարադրված քաղաքն այցելած խանիկովի կողմից:

Բրոսսեի հայագիտական մեծագույն արժանիքներից են անտարակույս հայ պատմագիրների բնագրերի հրատարակությունները՝ ֆրանսերեն թարգմանությամբ հանդերձ: Ըստ արժանվույն գնահատելով հայ պատմիչների գործերը՝ նա դրանցից շատ տեղեկություններ է քաղել արևմտյան Ասիայի և Վրաստանի պատմության վերաբերյալ, և Պետերբուրգում իր գիտական գործունեության երկրորդ մասը հատկացրել է հայ պատմագիրների ուսումնասիրությանը, մեկնաբանությանը, թարգմանությանը և լույս ընծայմանը թե՛ առանձին գրքերով և թե՛ հայ պատմագիրների ժողովածուներով: Տվել է տեղեկություններ պատմագրի, նրա գործերի, ձեռագրերի, հրատարակությունների մասին, բնագրերը լուսաբանել է բազմաթիվ ծանոթագրություններով: Այգափսով՝ նա շարունակեց Դյուլորիեի և Լանգլուայի թարգմանչական գործը, որը 1869 թ. անավարտ էր մնացել:

1879 թ. երկրորդ կեսից հիվանդությունն ընդհատեց Բրոսսեի գիտական աշխատանքը: 1880 թ. մայիսի 20-ին բուժման նպատակով նա մեկնեց Ֆրանսիա, որտեղ կլիման ավելի մեղմ էր: Սա-

կայն նա այստեղ մահացավ նույն թվականի սեպտեմբերի 3-ին, 79 տարեկան հասակում: Երախտագիտության զգացումից զրդված՝ նա Պետերբուրգի Ակադեմիային կտակեց իր ամբողջ գիտական գրադարանը, ինքնագիր ձեռագրերը, վրացերեն թանկագին ձեռագրերի ժողովածուն, նամակները և այն բոլորը, որ կարող էր օգտակար լինել Ասիական թանգարանին, Պետերբուրգի գրադարաններին և համալսարանին: Իսկ Փարիզի Ազգային գրադարանին նվիրեց Պետերբուրգի հրատարակությունների իր ճոխ ժողովածուն:

Բրոսսեի գիտական վիթխարի գործունեությունը, որ համառոտ արտացոլված է նրա աշխատությունների մատենագիտական ցանկում (271 անուն, չհաշված այն հրատարակությունները, որոնց նա մասնակցել է այս կամ այն կերպ), զարմանք և հիացմունք է պատճառում: Պարզ է, որ նա այս գիտական արդյունքին չէր հասնի Փարիզում, որտեղ վրացագիտության և հայագիտության ուսումնասիրություններ արժարժող նյութերն այնքան առատ չէին, որքան Ռուսաստանում, Վրաստանում և Հայաստանում: Այստեղ շատ աշխատանք կար անելու դեռևս չուսումնասիրված նյութերի վրա: Շատ հաճախ Բրոսսեն իր շրջապատում եղել է միակ վրացագետն ու հայագետը, և վրացագիտության ու հայագիտության բնագավառներում տեղի չի ունեցել մտքերի բախում, որից ծնունդ է առնում ճշմարտությունը: Այդ է պատճառը, որ մասնագետների (հայագիտության գծով՝ Դյուլորիեի) կարծիքով (և սա ճիշտ է) Բրոսսեի ուսումնասիրությունների մեջ նկատելի է շտապողականություն, քննադատական մտքի բացակայություն, որոնք անտքնաջան և թեթև աշխատանքի նշան են: Ուստի պետք է քննադատաբար օգտագործել Բրոսսեի հայագիտական ժառանգությունը՝ թարգմանությունները, հայերեն արձանագրությունների հրատարակությունները և այլն: Իր հրատարակություններով Բրոսսեն շատ անգամ հող է պատրաստել հետագա ուսումնասիրություններին:

1 Բրոսսեի ամենից ընդարձակ կենսագրականը հրատարակել է նրա որդին՝ Լորան Բրոսսեն իր հոր գիտական աշխատությունների ընդարձակ մատենագիտության մեջ՝ *Bibliographie analytique des ouvrages de Marie-Felicite Brosset, St.-Petersbourg, 1887*:

Նշենք, որ 1880 թ. Լորան Բրոսսեն Պետերբուրգում հրատարակել էր նաև իր հոր աշխատությունների համառոտ ցանկը՝ *Liste des travaux de M. Brosset*:

* * *

Բրոսի հայագիտական ուսումնասիրությունների ստորև տրվող ցանկը առանձնացրել ենք իրան Բրոսի ընդարձակ, վերլուծական մատենագիտությունից, ըստ այսմ LB N^o-ում նշում ենք նրա համարը: Այն մանրամասներեն ընթերցելով՝ առանձնացրել ենք նաև Բրոսի ոչ հայագիտական աշխատությունների այն հատ-

վածները, որոնք առնչվում են հայագիտության հետ: Ամբողջ նյութը խմբավորել ենք հայագիտական մի քանի ճյուղերի ընդհանուր անվանումների տակ. հնարավոր էին մասնատումներ, որոնցից խուսափեցինք նկատի ունենալով նյութի սակավությունը:

Ցանկի վերջում տրված է գիտական հանդեսների անունների համառոտագրությունների բունալին:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ց Ա Ն Կ

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Description de l'ancienne Géorgie turque, comprenant le pachalik d'Akhaltzikhé et le Gourla.

Հին Վրաստանի թուրքական մասի նկարագրությունը, որն ընդգրկում է Ախալցխայի փաշալիքը և Գուրիան. հեղինակ՝ Ղուկա. Ինճիճյան, հայերենից թարգմանեց Մ. Բրոսը:

Journ. as., հատ. ԺԳ, 1834, մայիս, էջ 458—487:—LB 33

2. Description des principaux fleuves de la Grande-Arménie, d'après le Djihan-Numa de Klatib-Tchélebi, par Amédée Jaubert, avec la traduction d'un fragment du docteur Indjidjian.

Մեծ Հայքի գլխավոր գետերի նկարագրությունն ըստ Քյաթիր-Չելեբիի «Ջիհան-Նումայի» (թարգմ. Ամեդե ժոբեր), Ղուկ. Ինճիճյանի մի հատվածի թարգմանությամբ, թարգմ. Բրոս N. Journ. as., հատ. ԺԲ, նոյ. 1833, էջ 458—470:—LB 31

Մանր. — Ղ. Ինճիճյանի «Ասիա» աշխատության Ա. հատորից թարգմանված են Արաքսին, Կուրին և Ճորոխին վերաբերող հատվածները:

3. Brosse u Kennen, Разбор (рукописного) сочинения г. Шопена: „Статистическое описание Армянской области“.

Բրոս և Կեպպեն, Կարծիք Շոպենի «Հայկական նահանգի վիճակագրական նկարագրությունը» ձեռագիր աշխատության մասին

Десятое присуждение Демитовских наград, 17 ապրիլի 1841, էջ 169—209:—LB 93

Մանր. — Բրոսն գրախոսել է աշխատության միայն առաջին մասը՝ «Ակնարկ Հայաստանի հին վիճակի մասին»:

4. Ascension de l'Ararat [par le colonel Khodzko, le (18) 6 août 1850].

Վերելք Ղևպի Արարատ [գնդապետ Խոճքո, (18) 6 օգոս. 1850]

Journ. de SPb. (Հաբսբաթերթ), Հաբսթ (23) 11 նոյեմբերի 1850. N 227, էջ 1910—1913:—LB 147

5. Notice sur Etchmiadzin.

Տեղեկություն էջմիածնի մասին

1. Bull. sc., հատ. Է, սյուն. 44—61, 2. Բնագրով և ուսուցիչի թարգմ. վերահրատարակված է Կորդանովի Каталог книгм Эчмиадинской библиотеки գրքում, էջ 2—61, 1840, ութածալ, 121 էջ:—LB 83

6. Rapport sur la deuxième partie du voyage du P. Sarguis Dchalalians dans la Grande-Arménie.

Դիտ. հաշվետվություն հ. Սարգիս Զալալյանցի Մեծ Հայք կատարած ճանապարհորդության Բ. մասի վերաբերյալ

Bull. hist.—phil., հատ. ԺԶ, սյուն. 201—205—Mél. as., հատ. Գ, էջ 589—594: Առանձնատիպ, էջ 589—594:—LB 186

Բովանդակություն.— Մատենագիտական ցանկ հին Հայաստանի աշխարհագրության վերաբերյալ աշխատությունների: Տեղեկություններ Հովհ. Շահասթունյանցի «Ստորագրություն կաթողիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ» (հատ. Ա և Բ, էջմիածին, 1842) աշխատության վերաբերյալ:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

7. Sur l'histoire ancienne de l'Arménie, d'après les textes hiéroglyphiques et cunéiformes.

Հայաստանի հին պատմության մասին, ըստ հիերոգլիֆ և քեպագիր բնագրերի

Bull. de l'Acad., հատ. ԺԶ, 1871, սյուն. 332—340—Mél. as., 1873, հատ. Զ, էջ 389—400: Առանձնատիպ, ութածալ, 389—400—LB 246

8. Fragments d'auteurs orientaux relatifs a la prise de Constantinople.

Կոստանդնուպոլսի առմանը վերաբերող հատվածներ արևելքի պատմագիրներից

Lebeau, Histoire du Bas-Empire, հատ. ԻԱ, Փարիզ, 1836, էջ 307—314. —LB 46

Մանր. — Այստեղ Բրոսի ֆրանսերեն թարգմանությամբ տպագրված է XV դարի տաղերգու Արրահամ Անկյուրացու հայտնի «Ողբ ի վերայ առման Կոստանդնուպոլսի ի Տաճկաց»-ը Փա-

րիզի Ազգային գրադարանի N° 80 ձեռ.-ից: Նույն ողբը լույս է տեսել նաև «Ժուռնալ ազիատիկ»-ում, 1835 թ. մարտ ամսին, հայագետ էռծեն Բորեի ֆրանսերեն թարգմանությամբ:

9. Des sources originales de l'histoire de Géorgie. 1^{er} article: Chronique de Wakh-tang. Ancienne traduction abrégée, en arménien. 2^e article: Abrege historique de Nakhoucht, jusqu'au 5^e s. de notre ere.

Վրաստանի պատմության սկզբնաղբյուրների մասին: Հոդված 1-ին՝ Վախթանգի ժամանակագրությունը: Հայերեն համառոտ հին թարգմանությունը: Հոդված 2-րդ՝ Նախուշտի համառոտ պատմությունը, մինչև մ. թ. V դար:

Journ. de SPb., 1847, 1-ին հոդված. 16 մայիսի, N° 249, և 17 մայիսի, N° 250, 2-րդ հոդված՝ 4 հունիսի, N° 265, և 8 հունիսի, N° 269: Առանձնատիպ, ութաժալ, 39 էջ: LB 120

10. Projet d'une collection d'historiens arméniens inédits. 1^{er} article.

Հայ անտիպ պատմագիրների մի ժողովածուի ծրագիր: Առաջին հոդված

Bull. sc., հատ. I, 1841, սյուն. 177—189: Առանձնատիպ, ութաժալ, 16 էջ: 2^e article. Երկրորդ հոդված:

Bull. sc., հատ. II, 1842, սյուն. 253—268: Առանձնատիպ, ութաժալ, 22 էջ: LB 90

11. Analyse critique de l'Histoire universelle de Vartan. Edition princeps du texte arménien et introduction russe par M. N. Emin.

Վարդանի տիեզերական պատմության քննական վերլուծություն: Բնագրի անդրանիկ հրատարակություն և ուսուցչական ներածություն Մ. Ն. էմինի, Պ., 1862

Mém., 7^e série, T. 4, № 9. LB 202

Ծանոթ. — Բրոսեի նպատակն է ցույց տալ Վարդանի, որպես պատմագրի արժանահավատությունը և հայերեն բնագրի ու ուսուցչական թարգմանության կարևորությունը: էմինի հրատարակությունը կատարվել է Բրոսեի միջամտությամբ:

12. Notice sur l'historien arménien Thoma Ardzrouni, 10^e s.

Ծանոթություն հայ պատմագիր Թովմա Արծրունու մասին, Ժ դ.

Bull. de l'Acad., հատ. II, 1863, սյուն. 538—554 Mém. as., հատ. IV, 1863, էջ 686—709: Առանձնատիպ, ութաժալ, էջ 686—709: Շարունակություն՝ Bull. de l'Acad., հատ. II, սյուն. 69—102 Mém. as., հատ. IV, էջ 716—763: Առանձնատիպ, ութաժալ, էջ 716—763: LB 215

13. Notice sur l'historien arménien Mkhitar d'Airtivank.

Ծանոթություն հայ պատմագիր Մխիթար Այրիվանեցու մասին

Bull. de l'Acad., 1863, հատ. II, սյուն. 3—4 Mém. as., 1863, հատ. IV, էջ 714—715. LB 219

14. Histoire de la Siounie, par Stéphanos Orbélian.

Ստեփանոս Օրբելյան, Պատմություն Սիւնեացմասն Ա, Բրոսեի ֆրանսերեն թարգմանությունը հայերեն բնագրից, ծանոթություններ. Պետերբուրգ, 1864, քառաժալ, էջ 1—300. մասն Բ, ներածություն, Պետերբուրգ, 1866, քառաժալ, էջ 1—186 և 301—306 (ուղղումներ և հավելվածներ): ՏԼՍ նաև Litterarisches Centralblatt 1865, N° 12. LB 224

15. Etudes sur l'historien arménien Mkhitar d'Airtivank. 13^e s. 1^{re} et 2^e parties: De la création du monde au commencement de l'ere chrétienne: 3^e partie: jusqu'en 1289 de J.—C.

Ուսումնասիրություններ հայ պատմագիր Մխիթար Այրիվանեցու վերաբերյալ, Ժ Գ դ., մասն Ա և Բ, Աշխարհի արարչագործությունից մինչև մ. թ. սկիզբը: Մասն Դ, մինչև մ. թ. 1289 թ.

Bull. de l'Acad., հատ. I, 1865, սյուն. 391—416 Mém. as., 1868, հատ. II, էջ 315—350: Առանձնատիպ, էջ 315—350. LB 228

Ծանոթ.— Բրոսեն ուսումնասիրել է Այրիվանեցու ժամանակագրությունը:

16. Examen d'un passage de l'historien arménien Oukhtanès, relatif a la prétendue conquête de „l'Ibérie" par Nabuchodonosor.

Քննություն հայ պատմագիր Ուխտանեսի մի հատվածի, որ վերաբերում է Նաբուգոդոնոսորի կողմից «Բեբելիայի» ենթադրյալ գրավմանը:

Bull. de l'Acad., հատ. ԺԳ, 1869, սյուն. 248—260 Mém. as., հատ. II, 1868, էջ 742—760: Առանձնատիպ, ութաժալ, էջ 742—760. LB 237

Ծանոթ.— Բրոսեն ապացուցում է, որ խոսքը Իսպանիայի իրերների մասին չէ, այլ Սև ծովի ափին հատատված երբայեցիների «Վիրք» անվան ստուգարանությամբ Բրոսեն ժխտում է վրացիների հրեական ծագումը:

17. Etude sur l'historien arménien Oukhtanès, 10^e s.

Ուսումնասիրություն հայ պատմագիր Ուխտանեսի մասին, Ժ դ.

Bull. de l'Acad., հատ. ԺԳ, 1869, սյուն. 401—454 Mém. as., 1873, հատ. II, էջ 13—89: Առանձնատիպ, ութաժալ, էջ 13—89. LB 238

Մանոր.— Հոգովածում ուսումնասիրված է հայկական տոմարը, քննված է Դյուլորիեի Recherches sur la chronologie armenienne technique et historique, 1re partie: Chronologie technique աշխատությունը:

18. Histoire chronologique, par Mkhitar d'Aïrivanik, 13e s.

Միսիթար Այրիվանեցի, ժամանակագրական պատմություն. Բրոսեի ֆրանսիական թարգմանությունը Musée asiatique-ի հայերեն ձեռագրից, որն իր հերթին լնդորինակված է էջմիածնի մի ձեռագրից. ծանոթագրություններ, Պետերբուրգ, 1869, քառածալ, 1-9—110 էջ:

Mém., 7e série, հատ. ժ. 5, № 5.—LB 239

19 Sur l'histoire composée en arménien par Thoma Ardzrouni, 10e s. Թոմա Արծրունու պատմության մասին, ժ. 7.

Bull. de l'Acad., հատ. ժ. 1870, սյուն. 428—432=Mé. as., հատ. 2, էջ 228—232.—LB 242

Մանոր.— Հոգովածում գլխավորապես քննարկված են հայ պատմագրական մի շարք հրատարակություններ՝ Սվսերիոս Կեսարացի, Միքայել Ասորի, Դյուլորիեի Հայկական ժամանակագրությունը, Լարուրնա: Հոգովածի վերջում միայն Բրոսեն հայտնում է, որ ինքը ֆրանսերեն թարգմանել է Թովմա Արծրունու Պատմությունը:

20. Deux historiens arméniens: Kirakos de Gantzac, 13e s., Histoire d'Arménie; Oukhtanès d'Ourha, 10e s., Histoire en trois parties.

Երկու հայ պատմագիր՝ Կիրակոս Գանձակեցի, ժ. 7, Պատմություն հայոց. Ուխտանես Ուռհանցի, ժ. 7. Մատմութիւնս յերիս հատուածս...: Ֆրանսերեն թարգմանեց Բրոսե, Պետերբուրգ, քառածալ, ԿԲ—351 էջ: Լույս է տեսել երկու պրակով, առաջինը 1870 թ., 2-րդը՝ 1871 թ.:

Մանոր.— Ներածականում ուսումնասիրվում է հայկ. տոմարը:

21. Samouel d'Ant; revue générale de sa chronologie.

Սամուել Անեցի. նրա ժամանակագրությանը ընդհանուր տեսությունը:

Bull. de l'Acad., հատ. ժ. 1873, սյուն. 102—112=Mé. as., հատ. 2, 1873, էջ 741—798: Առանձնատիպ, ութածալ, էջ 741—798.—LB 250

Մանոր.— Ֆրանսերեն թարգմանությունը կատարված է երկու ձեռագրից, օգտագործվել է նաև Ջոհրաբի լատիներեն թարգմանությունը:

22. Des historiens arméniens des 17e et 18e siècles. Arakel de Tauriz, Registre chronologique.

Ժ. և Ժ. Դարերի հայ պատմագիրներ. Առաջին Դավրիժեցի, ժամանակագրություն. Պետերբուրգ, քառածալ, 60 էջ, 1873 թ.:

Mém., 7e série, T. 5, № 5.—LB 249

Մանոր.— Ներածականում Բրոսեն ուսումնասիրում է հայկական տոմարը, Բուն աշխատանքը Դավրիժեցու Պատմության 55-րդ գլխի թարգմանությունն է ըստ Ամստերդամի 1669 թ. հրատարակության:

23. Notice sur le diacre arménien Zakaria Ghabontz, auteur des Memoires historiques sur les Sofis, 15e—17e siècles.

Տեղեկություն Ջաբարիա Սարկավազի մասին, հեղինակ Սոֆիների մասին պատմական հիշատակարանների, 15—17 դդ.:

Bull. de l'Acad., հատ. ժ. 1874, սյուն. 320—333=Mé. as., հատ. 2, 1876, էջ 93—112: Առանձնատիպ, էջ 93—112.—LB 252

Մանոր.— Բրոսեն տեղեկություն է տալիս Ջաբարիայի «Կոնդակ սուրբ ուխտին Յովհաննու վանից» աշխատության վերաբերյալ:

24. Collection d'historiens arméniens.

Ժողովածու հայ պատմագիրների. հատ. Ա. Թովմա Արծրունի, ժ. 7. Պատմութիւն Արծրունեաց. Առաջին Դավրիժեցի, ժ. 7. Պատմութիւն... Հովհաննես Մառեցի, Պատմութիւն աղուանից աշխարհին: Ֆրանսերեն թարգմանեց Բրոսե, Պետերբուրգ, 1874, ութածալ, ԼԲ—618 էջ: Ժողովածու հայ պատմագիրների. հատ. Բ. Պետերբուրգ, 1876, ութածալ, Դ—696 էջ, ֆրանսերեն թարգմանեց Բրոսե:

Բովանդակություն.— 1. Նախնական ծանոթություններ և նյութերի ցանկ:

2. Ջաբարիա Սարկավազի (Ժ. 7.) պատմական տեղեկությունները Սոֆիների վերաբերյալ (էջ 1—154):

3. Հավհաննավանքի կոնդակը ըստ Ջաբարիա Սարկավազի (էջ 155—190):

4. Նսայի կաթողիկոս Հասան-Ջալալյանցի (Ժ. 7.) Պատմութիւն Աղուանից (էջ 191—220):

5. Պատմութիւն Դաւիթ Բէկի և պատերազմացն, զոր ետուն Հայք Կապանայ ընդդէմ Թուրքացի թուրիս Քրիստոսի 1722 և Հայոց ՌՃՀԱ (էջ 221—256):

6. Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմութիւն իւրոյ ժամանակին և Նազրշահի (Ժ. 7.) (էջ 257—338):

7. Սամուէլի Անեցւոյ Տախտակք ժամանակացականք (էջ 339—434):

Մանոր.— Բրոսեի ծանոթագրություններն ու մեկնությունները տրված են թարգմանության բնագրին հանդիպակաց էջերում:

8. 1835—1838 թթ. Կովկասում ծառայած զինվորական մի սպայի հուշերը. (էջ 435—696)

[Русский вестник-ում 1864 թվականի հոկ.—
գեկ. ամիսներին լույս տեսած ուսերեն սի
աշխատության ֆրանսերեն թարգմանությունը]—
LB 255

25. Revue de la littérature historique de
l'Arménie.

Պատկեր Հայաստանի պատմագրության

Bull. de l'Acad., հատ. ԻԲ, 1877, սյուն. 303
—312—Mél. as., հատ. Է, 1881, էջ 21—34.—
LB 259

Մանր.— 1864—1875 թթ. հրատարակված
հայ պատմագիրների, հայերեն հայագիտական
աշխատությունների մատենագիտական ցանկ.

26. Histoire du Bas-Empire, par Lebeau.

Լըբո, Պատմություն արևելյան կայսրու-
թյան, հատ. ԺԳ—ԻԱ, Փարիզ, 1832—1836
թթ.—LB 22

Մանր.— Ժ. Սեն-Մարտենի մահից հետո
(16 հլս. 1832) Բրոսեն ստանձնեց նշված բազ-
մահատոր աշխատության վերահրատարակու-
թյան խմբագրությունը և ստորագրված ծանո-
թագրություններով և հատվածներով կամ լրա-
գումներով նա նշված պատմությունը ճշտեցրել
է այլ հեղինակներից, այդ թվում և հայ պատ-
մագիրներից և հայ նորագույն պատմիչներից
բաղված տեղեկություններով, նշենք հատկապես
հատ. ԺԳ, էջ 477—488. «Մոնղոլների արշավան-
քը գեպի արևելյան Ասիա ԺԳ գարում» հատվա-
ծի համար Բրոսեն աղբյուրներն են, ի թիվս այլ
հեղինակների, Կիրակոս Գանձակեցին, Վարդան
Մեծը, Միք. Չամչյանցը և ուրիշներ. հատ. Ի, էջ
482—509, Տրապիզոնի մասին տեղեկություններ
են բաղված Մինաս Բժշկյանի և մանավանդ
Ղուկ. Ինճիճյանի աշխատություններից. տե՛ս
նաև հատ. ԻԱ, էջ 305—331 և այլն.

27. Rapport sur un opuscule allemand du
Dr. Neumann ayant pour titre: „Histoire de
l'émigration de 40.000 Arméniens qui pas-
sèrent de la province persane de l'Aderbi-
djan en Russie, en 1828“. Traduite de l'ori-
ginal russe et arménien par Ch. Fréd. Neu-
mann.

Կարծիք զր. Նոյմանի գերմաներեն մի դրբույ-
նի մասին, որի վերնագիրն է «Պատմություն
վերաբնակեցման 40.000 հայերի, որոնք 1828 թ.
պարսկական Ադրբեջանից անցան Ռուսաստան»:
Ռուսերեն և հայերեն բնագրից թարգմանեց
Շ. Ֆրեդ. Նոյմանը.—LB 36, անտիպ, 15 էջ.

Մանր.— Աշխատությունը նվիրվել է Ասիա-
կան ընկերությանը՝ նրա 1834 թ. օգոստոսի
նիստում. Բրոսենի գրախոսության բովանդակու-
թյունը հետևյալն է. Նոյմանի Հայաստանին վե-
րաբերող աշխատությունների ցանկը. հայ
պատմագրության ճշտությունն ու կարևորու-

թյունը. բարձր գնահատական Միք. Չամչյանի
և Ղուկ. Ինճիճյանի աշխատություններին. հայ
քերականների և բառարանագիրների աշխա-
տանքները. հայերեն, սանսկրիտ և լատիներեն
լեզուների աղբյուրակցությունները Գրբույկի վեր-
լուծությունը և թարգմանչի կատարած աշխա-
տանքի գնահատումը Գրբույկի հեղինակն է
Սերժ Գլինկան. Հայերի վերաբնակեցման պատ-
ճառ դարձած գնդապետ Լազարյանի հայտարա-
րությունը հայերեն է, Իր այս անտիպ գրախո-
սության առաջին մասը Բրոսեն օգտագործել է
1838 թ. հունվարի 10-ին արտասանած ակադե-
միական ճառում, որը լույս է տեսել Recueil
des actes de la séance publique de l'Acad-
émie impériale-ում, 1838, p. 80.

28. Sur la première expédition Caspienne
des Russes normands en 914, d'après la
chronique inédite de l'Arménien Mosé Ca-
ghancatovatsi. par E. Kunik.

Ռուսների կասպյան առաջին արշավանքի մա-
սին, 914 թ., ըստ Մովսես Կաղանկատվացու
անտիպ ժամանակագրության Հեղինակ՝ է. Կու-
նիկ.

Bull. hist.—phil., հատ. Դ, 1848, սյուն. 202
—204.—LB 121

Մանր.— Նյութը Կաղանկատվացու կամ նրա
պատմության շարունակողի մի հատվածն է,
որը վերաբերում է Ժ դարում ռուսական արշա-
վանքին, Կասպից ծովից, Կուր գետի ափին կա-
ռուցված Պարտավ բաղաթի վրա.

29. Précis de l'histoire des invasions des
Mongols dans l'Asie occidentale au 13^e s.

ԺԳ դարում Մոնղոլների ղեպի արևմտյան
Ասիա կատարած արշավանքի համառոտ պատ-
մությունը

Lebeau, Histoire du Bas-Empire, հատ. ԺԷ.
1834, էջ 449—481. Առանձնատիպ. Փարիզ,
1834, էջ 449—481.—LB 34

30. Histoire des Bagradites géorgiens,
d'après les auteurs arméniens et grecs, jus-
qu'au commencement du 11^e s.

Վրացական Բագրատունիների պատմությունն
ըստ հայ և հույն պատմագիրների, մինչև ԺԱ
դարի սկիզբը, ծննդաբանական 4 տախտակե-
րով

Bull. hist.—phil., հատ. ԻԱ, 1844, սյուն.
145—174, 177—208.—LB 101

Մանր.— Վերահրատարակված է, փոփոխու-
թյուններով և կարևոր ուղղումներով, Վրաստա-
նի պատմության 3-րդ հատորում (ֆրանսերեն).
Պետերբուրգ, 1851, Հավելված Ժ, էջ 138—188.

Բովանդակությունից.— Գլ. Գ, սյուն. 169—
174, Հայ Բագրատունիների պատմությունը, որ-

քանակ այն կապված է վրաստանի և վրացի Բագրատունիների պատմության հետ, ըստ հայկական աղբյուրների (Վարդանի, Ասողիկի, Հովհաննես կաթողիկոսի և ուրիշների)։ Գլ. Դ, Հայ հեղինակներից քաղված տեղեկություններ Տայեցի և արխագ Բագրատունիների վերաբերյալ։

31. Histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'au 19^e s.

Վրաստանի պատմություն, հին ժամանակներից մինչև ժ. զ., վրացերենից թարգմանեց Բրոսե. մասն Ա, հատ. Գ, Additions et éclaircissements a l'histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'en 1469 de J—C.

Լրացումներ և լուսարանումներ Վրաստանի պատմությանը, հին ժամանակներից մինչև մ. թ. 1469 թ., Պետերբուրգ, 1851, քառածալ, 496 էջ։

Բովանդակությունից.— 1. Հայկական ժամանակագրություն (վրացական տեղեկությունների հայերեն ամփոփում), ֆրանսերեն թարգմանեց Մ. Բրոսե, էջ 1—16։

2. Լրացումներ և վրաց և հայ եկեղեցիների քաջանման պատմությունը VI դարից սկսած (էջ 107—125)։

Թ. Վրաց Բագրատունիների պատմությունն ըստ հայ և հույն պատմագիրների, սկսած XI դարից (էջ 168—188)։

ԺԱ. Հայ պատմագիրները Գեորգի Ա-ի թագավորության մասին (էջ 209—218)։

ԺԲ. Վարդանից և ուրիշներից քաղված տեղեկություններ Գեորգի Լաշայի և Ռուսաստանի թագավորությունների մասին (էջ 298—309)։

3. Ջելալ-էդ Դինի արշավանքները դեպի Վրաստան (էջ 309—317)։

ԻԴ. ԺԳ դարի հայ պատմագիր Կիրակոսից քաղվածքներ գլխավորապես Թամարի և նրա հաջորդների թագավորության վերաբերյալ (էջ 412—437)։

ԻԵ. Պատմություն Մաղսքիա աբեղայի (էջ 438—467)։

ԻԶ. Քաղվածքներ Կաղանկատվացու Աղվանից պատմությունից (էջ 468—494)։

Վրաստանի պատմություն, մասն Բ, հատ. Ե, Պետերբուրգ, 1856, 660 էջ. Լրացումների մեջ դրած է նաև

Դ. Քաղվածքներ Առաքել Դավրիժեցու Պատմությունից Սուրմոն Ա-ի և Գեորգի Ժ-ի թագավորությունների վերաբերյալ (էջ 421—445)։— LB 141

32. Listes chronologiques des princes et métropolitites de la Siounie, jusqu'à la fin du 13^e s.

Ժամանակագրական ցուցակներ Սյունիքի իշխանների և եպիսկոպոսների, մինչև ժ. դարի վերջը

Bull. de l'Acad., հատ. Դ, 1862, սյուն. 497—562—Mél. as., հատ. Դ, էջ 501—592, Առանձնատիպ, էջ 501—592.— LB 207

Մանր.— Նշանակալից փոփոխություններով նույնը վերահրատարակված է Ստեփանոս Օրբելյանի «Սյունիքի պատմության» Բրոսեի ֆրանսերեն թարգմանության մեջ։

33. О новом сочинении проф. Дюлорье по части армянской хронологии.

Պրոֆ. Դյուլորիեի «Հայկական ժամանակագրություն» նոր աշխատության մասին

Մ. Յ. Յան. I և III отд. Акад., հատ. Բ, սլավ. 1, 1851, էջ 221—222.— LB 166

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

34. De la littérature arménienne

Հայ գրականության մասին

Le Cabinet de lecture, 24 հոկ. 1833, № 292, № CXCVII, էջ 1—2.— LB 29

Մանր.— Ծանոթություններ հայոց լեզվի, հայ պատմագիրների, Բյուզանդիայի հայ կայսրերի, խաչակրություններին հայերի մասնակցության, Վենետիկի Մխիթարյան միաբանության մասին, որոնք մեծ մասամբ քաղված են Միք. Չամչյանից։

35. Liste des ouvrages arméniens offerts a la Societe Asiatique par M. J. Awdal. dans la séance du 5 janvier 1835.

Յուցակ հայերեն գրքերի, որ Ասիական ընկերությանն է նվիրել Բենգալի Ասիական ընկերության անդամ պր. Ժ. Ավդալը 1835 թ. հունվարի 5-ի նիստում։

N. Journ. As., սեպ. 1835, հատ. ԺԶ, էջ 285—288.— LB 42

36. Notice sur les manuscrits appartenant a la bibliothèque de l'Institut Asiatique établi près le Ministère des Affaires Etrangères.

Տեղեկություն հայերեն ձեռագրերի մասին, որոնք պատկանում են Արտաքին գործերի մինիստրության կից Ասիական ինստիտուտի գրադարանին։

Bull. sc., հատ. Դ, 1838, սյուն. 21—26, 36—41, Առանձնատիպ, 15 էջ.— LB 61

Մանր.— Նկարագրված է հորենացու Պատմության մի ձեռագիր, քարոզների մի ձեռագիր, ձեռագիր, որտեղ բնագրեր կան Հակոբ վարդապետ Ղրիմեցուց, Հովհաննես Որոտնեցուց և ներսև Ա Կաթողիկոսից։

37. Կարծիք Խ. Արուվյանի՝ մրցակցության ներկայացրած գրվածքների մասին

